ԺՊՏԱԼՈՒ
ՉՈՐՍ ՊԱՏՃԱՌ

Ժպիտ 1 — Աստված սիրում է քեզ հավիտենական սիրով

«Աստված այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդուն տվեց, որպեսզի ով Նրան հավատա, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա»: (Հովհաննես 3:16)

Անկախ այն բանից, թե ինչ ես զգում կամ ինչի միջով ես անցել, Աստծո սերը քո հանդեպ երբեք չի փոխվի: Նա իր միածին Որդուն զոհեց քեզ համար:

Ժպիտ 2 — Քրիստոսը մահացավ քեզ համար

Իրական սիրո ապացույցն ընկերոջ համար սեփական կյանքը զոհելն է: Չկա ավելի մեծ սեր, քան դա: Պատմությունը վկայում է, որ Հիսուսն ապրել է և մահացել խաչի վրա: Աստվածաշնչում գրված է, որ Նա այդ ամենն արեց ինձ և քեզ համար:

«Որովհետև բոլորը մեղանչեցին ու զրկվեցին Աստծո փառքից»: (Հռոմեացիներ 3:23)

«Որովհետև մեղքի վարձքը մահն է, իսկ Աստծո պարգևը՝ հավիտենական կյանքը՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»: (Հռոմեացիներ 6:23)

«Բայց Աստված մեր նկատմամբ ունեցած Իր սերը հայտնեց դրանով, որ երբ դեռ մեր մեղավոր էինք, Քրիստոսը մեզ համար մեռավ»: (Հռոմեացիներ 5:8)

«Նա Իր կյանքը տվեց մեր հանցանքների համար և հարություն առավ, որ արդարացնի մեզ»: (Հռոմեացիներ 4:25)

Ժպիտ 3 — Աստված նպատակ ունի քո կյանքի համար

«Որովհետեւ Ես գիտեմ այն խորհուրդները, որ խորհում եմ ձեր մասին,— ասում է Տերը, — բարօրության խորհուրդներ են եւ ոչ թե չարիքի, որպեսզի ձեզ ապագա և հույս տամ»: (Երեմիա 29:11)

Ամեն գլուխգործոց իր արարիչն ունի: Եվ ամեն գլուխգործոց կրում է այն նպատակը, որի համար ստեղծվել է: Դու յուրահատուկ ես Աստծո համար, և Նա իսկապես նպատակ ունի քո կյանքի համար: Աստծո հիմնական նպատակը քեզ համար՝ Իր սերը ճանաչելն է: Մնացած ամեն ինչն իր տեղը կընկնի, երբ վստահես, որ Աստված սիրում է քեզ:

Ժպիտ 4 — Այսօր քո օրն է

«Ահա հիմա է փրկության օրը»: (Բ Կորնթացիս 6:2)

«Աստված երրորդ օրը հարություն տվեց Նրան (Հիսուսին), եւ ուզեց, որ նա երևա...»
(Գործք Առաքելոց 10:40)

«Եթե բերանովդ Հիսուսին Տեր դավանես, և սրտումդ հավատաս, որ Աստված հարություն տվեց նրան մեռելներից, դու կփրկվե՛ս»: (Հռոմեացիներ 10:9)

Քո շունչն ինքնին Աստծո պարգև է: Նա ստեղծել է քեզ իր պատկերով և շատ է սիրում քեզ: Հիշի՛ր, որ վաղվա օրը երաշխավորված չէ, բայց հիմա դու հնարավորություն ունես ապաշխարելու քո մեղքերից և ստանալու Աստծո սիրո պարգևը՝ Հիսուս Քրիստոսի միջոցով: Խաչը թուլության արտահայտություն կամ կրոնաքաղաքական խորհրդանիշ չէր, այլ Աստծո զորությունը՝ մաքրելու մեզ մեղքից և խաղաղություն շնորհելու Աստծո հետ: Մի՛ մահացիր առանց Քրիստոսին ճանաչելու:

Մի՛ հապաղիր, աղոթի՛ր հիմա

Կրկնի՛ր ինձ հետ այս աղոթքը

Երկնավոր Հայր, Հիսուսի անունով, խնդրում եմ՝ ների՛ր իմ մեղքերը: Ես հավատում եմ, որ Հիսուսը Քո Որդին է, և որ Նա ապրեց ու մահացավ, և Դու Նրան հարություն տվեցիր, որովհետեւ սիրում ես ինձ:

Տե՛ր Հիսուս, մտի՛ր իմ սիրտը և դարձի՛ր իմ կյանքի Տերը: Խնդրում եմ՝ լցրու իմ սիրտը Սուրբ Հոգով և շնորհիր ինձ փրկության վստահությունը՝ որպես կենդանի Աստծո զավակ: Հիսուսի անունով խնդրեցի, ամեն:

Իմ աղոթքը քեզ համար

Տե՛ր Աստված, Հիսուսի անունով ես արձակում եմ Սուրբ Հոգու օծությունն այս անձի վրա՝ կոտրելու շփոթվածության և անհավատության բոլոր շղթաները:

Խնդրում եմ, որ պահապան հրեշտակները շրջապատեն նրան, ում Դու սիրում ես՝ պաշտպանելու և օգնելու համար: Հա՛յր, շարունակի՛ր բացահայտել քո ճշմարտությունն ու սերը այս թանկագին անձնավորությանը: Բժշկի՛ր նրա մարմինը և ազատի՛ր նրա միտքը: Հիսուսի անունով, Ամեն:

Խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ

www.foursmiles.com

©2019 FourSmiles Productions. Used by permission.